Բանկային հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր*

1. ՀՀ ռեզիդենտ Անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձի հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր

1) Անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ,
2) Հանրային ծառայությունների համարանիշ կամ ՀԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք (կիրառելի է միայն ՀՀ քաղաքացիների համար),
3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից քաղվածք՝ գրանցման վերաբերյալ (պատճենահանված):

2. ՀՀ ոչ ռեզիդենտ Անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձի հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր

1) Անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ,
2) Անհատ ձեռնարկատիրոջ գրանցման վերաբերյալ փաստաթուղթ՝ տրված տվյալ երկրի իրավասու մարմնի կողմից (բնօրինակ կամ պատճենահանված՝ պատշաճ վավերացված):

3. ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձի հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր

3.1. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, Բաց/Փակ բաժնետիրական ընկերություն կազմակերպա-իրավական ձև ունեցող անձանց համար.

1) Գործադիր մարմնի ղեկավարի/տնօրենի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ, իսկ եթե գործադիր մարմինը իրավաբանական անձ է, տվյալ անձի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից քաղվածքը, կանոնադրությունը և գործադիր մարմնի ղեկավարի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ,
2) 10 և ավել տոկոս (ուղղակի կամ անուղղակի) ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի տիրապետող բաժնետերերի, մասնակիցների անձը հաստատող փաստաթղթի պատճենը կամ բոլոր տվյալները, որը պարունակում է անձը հաստատող փաստաթուղթը, իսկ եթե 10 և ավել տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի տիրապետող բաժնետերերը կամ մասնակիցները իրավաբանական անձինք են, ապա այդ անձանց Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից քաղվածքը և կանոնադրությունը:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ մասնակիցների համար անհրաժեշտ է պահանջել սույն հավելվածով ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար նախատեսված փաստաթղթերը:

3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից քաղվածք (պատճենահանված)՝ գրանցման վերաբերյալ, և դեպոզիտարիայի քաղվածքը (Բանկ ներկայացնելուց առավելագույնը մեկ ամսվա վաղեմության) բաժնետերերի վերաբերյալ՝ բաժնետիրական ընկերությունների դեպքում,

4) Կանոնադրություն (պատճենահանված): Կանոնադրությամբ սահմանված դեպքերում հիմնադրի կամ համապատասխան իրավասու մարմնի համաձայնությունը հաշիվ բացելու վերաբերյալ:

5) Լիզենզավորման ենթակա գործունեության դեպքում լիցենզիայի պատճենը (լիցենզավորման ենթակա գործունեությունները սահմանվում են համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի: Լիցենզիայի առկայությունը կարող է նաև ստուգվել ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում):

3.2. <u>Ֆինանսական կազմակերպությունների համար/օրինակ՝ վարկային կազմակերպություններ, ներդրումային ֆոնդեր/ , ի թիվս 3.1 կետում նշված փաստաթղթերի՝</u>

1) Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող ֆինանսական կազմակերպությունների դեպքում լիցենզիայի առկայությունը կարող է ստուգվել կազմակերպության պաշտոնական կայքէջում:

2) Ներդրումային ֆոնդի դեպքում՝ ֆոնդի կառավարչի կանոնադրությունը (պատճենահանված)՝ , Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից քաղվածք՝ գրանցման վերաբերյալ (պատճենահանված) :

3.3. <u>Հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների, ասոցիացիաների համար.</u>

1) նախագահի/գործադիր մարմնի ղեկավարի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ,

2) Կանոնադրություն (պատճենահանված): Կանոնադրությամբ սահմանված դեպքերում համապատասխան իրավասու անձի/մարմնի համաձայնությունը հաշիվ բացելու վերաբերյալ): (Պետական (համայնքային) կառավարչական հիմնարկի, ՊՈԱԿ-ի համար): Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից քաղվածք՝ գրանցման վերաբերյալ (պատճենահանված),

3) Տեղեկություններ (ներառյալ անձը հաստատող փաստաթղթի պատճենները) բարձրագույն կառավարման մարմնի կազմի մասին (օրինակ՝ որոշում, արձանագրությունկամ հայտարարություն)

4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից քաղվածք՝ գրանցման վերաբերյալ (պատճենահանված) :

3.4. <u>Առևտրային և ոչ առևտրային կոոպերատիվների համար</u>

1) Նախագահի/ գործադիր մարմնի ղեկավարի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ,

2) Կանոնադրություն (պատճենահանված): Կանոնադրությամբ սահմանված դեպքերում համապատասխան իրավասու անձի/մարմնի համաձայնությունը հաշիվ բացելու վերաբերյալ),

3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից քաղվածք՝ գրանցման վերաբերյալ (պատճենահանված),

4) Կոոպերատիվի իրավասու մարմնի (ընդհանուր ժողով, դիտորդ խորհուրդ, վարչություն, նախագահ) կողմից տրված փաստաթուղթ՝ Կոոպերատիվի անդամների վերաբերյալ (Բանկ ներկայացնելուց առավելագույնը մեկ ամսվա վաղեմությամբ),

5) Տեղեկություններ 10 և ավել տոկոս (ուղղակի կամ անուղղակի) փայերի տիրապետող անդամների անձը հաստատող փաստաթղթի պատճենը/տվյալները կամ բոլոր տվյալները, որը պարունակում է անձը հաստատող փաստաթուղթը, իսկ եթե 10 և ավել տոկոս փայերի տիրապետող անդամները իրավաբանական անձինք են, ապա այդ անձանց Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից քաղվածքը (պատճենահանված), գործադիր մարմնի ղեկավարի/տնօրենի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ և կանոնադրությունը (պատճենահանված) : Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ անդամների համար անհրաժեշտ է պահանջել սույն հավելվածով ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար նախատեսված փաստաթղթերը:

4. Մնանկության հատուկ հաշիվ բացելու համար պահանջվող փաստաթղթեր (ի լրումն 1-ին և 2-րդ կետում նշված փաստաթղթերի)

1) Մնանկ ճանաչելու մասին դատարանի որոշում,
2) Մնանկության կառավարիչ նշանակելու մասին դատարանի որոշում,
3) Մնանկության կառավարչի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր,
4) Մնանկության կառավարչի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ,
5) Մնանկ ճանաչված անձի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր:

5. Հայաստանում օտարերկրյա պետության դեսպանության և հյուպատոսության հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր

1) ՀՀ-ում հավատարմագրված լինելու վերաբերյալ փաստաթուղթ,
2) Դեսպանի կամ հյուպատոսի նշանակման վերաբերյալ իրավասու մարմնի որոշումը (եթե դեսպանի կամ հյուպատոսի վերաբերյալ տվյալները նշված չեն ՀՀ-ում հավատարմագրված լինելու վերաբերյալ փաստաթղթում),
3) Դեսպանի կամ հյուպատոսի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր:

6. Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր

1) Կանոնադրության կամ կանոնադրությանը փոխարինող փաստաթղթի գործող տարբերակը, բնօրինակ կամ պատճենահանված՝ պատշաճ վավերացված,

2) Իրավաբանական անձի գրանցման, լուծարված կամ գործողությունը կասեցված չլինելու, տնօրենի, մասնակիցների և այլ տվյալներ պարունակող փաստաթուղթ/քաղվածք/տեղեկանք (Բանկ ներկայացնելուց փաստաթղթի տրամադրման պահից առավելագույնը վեց ամսվա վաղեմության)՝ տրված տվյալ երկրի իրավասու մարմնի կողմից (բնօրինակ կամ պատճենահանված՝ պատշաճ վավերացված),

3) Գործադիր մարմնի ղեկավարի/տնօրենի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի բնօրինակը (եթե գործադիր մարմնի ղեկավարի/տնօրենի անունից հանդես է գալիս լիազորված անձը, պահանջվում է վերջինիս անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի բնօրինակը, իսկ Գործադիր մարմնի ղեկավարի/տնօրենի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի պատճենը), իսկ եթե գործադիր մարմինը իրավաբանական անձ է, տվյալ երկրի իրավասու մարմնի կողմից տրված այդ իրավաբանական անձի գրանցման վերաբերյալ փաստաթուղթը, կանոնադրությունը և գործադիր մարմնի ղեկավարի անձնագիրը,

4) Գրանցող գործակալի կողմից թողարկված վկայագիր (Բանկ ներկայացնելուց փաստաթղթի տրամադրման պահից առավելագույնը վեց ամսվա վաղեմության)՝ գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի, 10 և ավել տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի տիրապետող բաժնետերերի կամ մասնակիցների մասին, կամ «ընկերության կարգավիճակի և/կամ ղեկավար անձանց մասին վկայագիր» (Certificate of Incumbency) կամ այլ իրավասու մարմնի կողմից տրամադրված փաստաթուղթ, որը պարունակում է նշված տեղեկատվությունը,

5) 10 և ավել տոկոս (ուղղակի կամ անուղղակի) ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի տիրապետող անձանց վերաբերյալ տեղեկատվություն՝ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ (պատշաճ վավերացված), իրավաբանական անձանց դեպքում՝ կանոնադրություն կամ դրան փոխարինող փաստաթուղթ և իրավաբանական անձի գրանցման, լուծարված կամ գործողությունը կասեցված չլինելու, տնօրենի, մասնակիցների և այլ տվյալներ պարունակող փաստաթուղթ/քաղվածք/տեղեկանք՝ տրված տվյալ երկրի իրավասու մարմնի կողմից (իրավաբանական անձանց համար սույն փաստաթղթի համաձայն՝ փաստաթղթի ներկայացման համար սահմանված կարգով):

Լրացուցիչ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության՝

6) Ֆինանսական հաշվետվություններ (նվազագույնը վերջին մեկ տարվա կտրվածքով, ինչպես նաև ամենավերջին ժամանակաշրջանի առկա ֆինանսական հաշվետվություններ),

7) Անկախ աուդիտորի եզրակացություն (նվազագույնը վերջին մեկ տարվա կտրվածքով),

8) Հիմնական գործընկերների ցանկ:

7. Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր (ի լրումն 1-6 կետերում պահանջվող փաստաթղթերի)

1) Բանկային հաշվի բացման և սպասարկման դիմում–հայտ (օֆերտա)
2) ՕՀՀՀԱ հարցաթերթիկ (առաջին անգամ Բանկ դիմելիս)
3) Ճանաչիր քո հաճախորդին հարցաթերթիկ (առաջին անգամ Բանկ դիմելիս):

*** Այն փաստաթղթերը, որոնցում պարունակվող տեղեկատվությունը Բանկը հնարավորություն ունի ստանալու իրեն հասանելի տեղեկատվական բազաներից, չեն պահանջվում Հաճախորդից (եթե առկա է Հաճախորդի (Անհատ ձեռնարկատերերի դեպքում) կամ Հաճախորդի իրավասու անձի համաձայնությունը այդ տեղեկատվությունը ստանալու և մշակելու վերաբերյալ):**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բանկը, անհրաժեշտության դեպքում, կարող է Հաճախորդից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:
2. Եթե առկա չէ նշում փաստաթղթի, այդ թվում՝ փաստաթղթի պատշաճ վավերականության վաղեմության ժամկետի վերաբերյալ, ապա այդ փաստաթղթերի համար վաղեմության ժամկետ չի սահմանվում:
3. Հաճախորդի կողմից ներկայացվում են բոլոր փաստաթղթերի բնօրինակները, եթե առկա չէ նշում պատճենը ներկայացնելու հնարավորության վերաբերյալ, կամ փաստաթղթերի պատշաճ վավերացված պատճենները:
4. Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կամ Անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը, պետք է լինեն պատշաճ վավերացված: Ընդ որում՝ պատշաճ վավերացում է համարվում՝

1) նոտարի կողմից վավերացումը (եթե փաստաթուղթը տրամադրված չէ պետական մարմնի կողմից) և/կամ ապոստիլով և/կամ տվյալ պետության իրավասու մարմնի կողմից վավերացումը կամ

2) այլ պետության տարածքում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից վավերացումը:

Փաստաթուղթը պետք է հաստատված լինի ապոստիլով, եթե այն տրվել է Հաագայի կոնվենցիան վավերացրած երկրներից մեկում (Երկրների ցանկը այս հղումով՝ Կոնվենցիայի անդամ երկրներ):

Բացառություն են կազմում Ռուսաստանը, Բելառուսը, Վրաստանը, Ուկրաինան, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Թուրքմենստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունը ունի այլ միջազգային համաձայնագրեր, որոնցից ելնելով Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերն ընդունելի են առանց ապոստիլով վավերացման: Նշված երկրների դեպքում բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն նոտարի կողմից վավերացված (եթե փաստաթուղթը տրամադրված չէ պետական մարմնի կողմից):

5. Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կամ Անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացվող սույն փաստաթղթերի ցանկով սահմանված ֆիզիկական անձանց անձը հաստատող փաստաթղթերը (այդ թվում՝ իրական շահառուի) կարող են ներկայացվել պատճենահանված տարբերակով (ոչ պատշաճ վավերացված) եթե Հաճախորդի կողմից ներկայացված որևէ պատշաճ վավերացված փաստաթղթում առկա են աձը հաստատող փաստաթղթի տվյալները, որոնք համադրելի են ներկայացված պատճենի հետ:

6. Բանկը կարող է պահանջել օտարալեզու փաստաթղթերի նոտարական վավերացմամբ թարգմանություն:

7. Այն փաստաթուղթ(եր)ը, որոնք Հաճախորդը ներկայացրել է Բանկ և բանկային հաշվի բացման օրվա դրությամբ դրանք առկա են Բանկում և վավեր են, Բանկի հայեցողությամբ կարող են չպահանջվել:

8. Բանկային հաշիվ բացելու և հաշվով գործարքներ կատարելու համար՝

1) Լիազորագրին ներկայացվող պահանջները սահմանվում են Կանոններով,
2) չի պահանջվում լիազորագիր, եթե հաշվով գործարքները կատարելու է հիմնադիր փաստաթղթերով լիազորված ղեկավար անձը,
3) պահանջվում է լիազորագիր՝ Կանոններով սահմանված կարգով, եթե հիմնադիր փաստաթղթերով լիազորված ղեկավար անձն իր իրավասությունները հաշվով գործարքներ կատարելու կամ բանկային հաշիվ բացելու համար փոխանցում է այլ անձի,
4) Լիազորագրով հանդես գալու դեպքում լիազորված անձը պետք է ներկայանա իր անձը հաստատող փաստաթղթով, իսկ ՀՀ քաղաքացիների դեպքում պահանջվում է նաև Հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ) կամ ՀԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանքը: